Բյուրեղավան համայնքի

ղեկավար Հակոբ Բալասյանին

Հարգելի պարոն Բալասյան,

«ԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 03570412, Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Գառնիի փողոց 6շ, բն. 36) ցանկանում է ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբեր բնակավայրի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի Հյուսիսային տեղամասում արդյունահանման թույլտվություն ստանալու համար դիմել լիազոր մարմին:

Հայցվող տեղամասը զբաղեցնում է մոտ 2 հա մակերես և տեղադրված է 07-055-0212-0139 կադաստրային ծածկագրով հողամասում: Հայցվող տեղամասում դեռևս ԽՍՀՄ տարիներից առկա է լիթոիդային պեմզայի հաստատված պաշարներ: Հայցվող հանքավայրի ծայրակետային կոորդինատներն են (կոորդինատները ներկայացված են ARM WGS-84 համակարգով)

1. X- 4467379.6332 Y- 8469070.1586
2. X- 4467384.4997 Y- 8469281.5873
3. X- 4467342.6462 Y- 8469282.5631
4. X- 4467228 Y- 8469148

Հայտնում ենք Ձեզ, որ նախատեսվող գործունեությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, 3-րդ մասի, 2-րդ ենթամասի թ կետի ներառվում է Ա կատեգորիայում:

Հայցվող տեղամասը վարչական առումով գտնվում է Կոտայքի մարզում, Բյուրեղավան խոշորացված համայնքի Ջրաբեր բնակավայրում՝ գյուղից մոտ 1-1.2կմ հյուսիս-արևելք:

Ընկերությունը ցանկանում է հանքավայրի արդյունահանման թույլտվություն ստանալ 20 տարի ժամկետով, ինչը հաշվարկված մոտ 420000 մ$^3$ պաշարների դեպքում թույլ կտա տարեկան արդյունահանել մոտ 21000 մ$^3$ օգտակար հանածո:

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔ N Մ-345/24
« 30 » 01 2024 թ.

Արդյունահանման աշխատանքները կիրականացվեն լեռնատրանսպորտային միջոցերով՝ առանց պայթեցման աշխատանքների:

Նախատեսվող գործունեությունը դեռևս գտնվում է նախնական գնահատման փուլում, ուստի խնդրում ենք Ձեր համաձայնությունը և օժանդակությունը՝ համայնքում հանրային լսումներ իրականացնելու և լիազոր մարմին դիմելու հետագա իրավական ընթացքն ճիշտ կազմակերպելու հարցում: Արդյունահանման թույլտվություն ստանալու դեպքում Ընկերությունը կնախաձեռնի նոր աշխատատեղերի բացում և ազդակիր համայնքին սոցիալական և այլ օժանդակ օգնության տրամադրում:

Հարգանքով՝

«ԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Տնօրեն Արմենակ Աբոյան

Հեռ. 094 432678
E-mail armen.abovyan60@gmail.com
Հասցե. ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Գառնիի փ. Շ. 6, բն. 36


Jraber
Ջրաբեր գյուղից
մոտ 1-1.2 կմ
Google Earth
Image © 2024 Airbus